



Սոցիալական Ապահովության ծրագրի մասնակցողները մեծամասնությամբ գործավոր են: Գործատերը աշխատավարձից նվազում է Սոցիալական Ապահովության հարկեր, ավելացնում է հաւասարաչափ գումար, ուղարկում է Ներքին Հարկային Ծառայողության, եւ արձանագրում է հասույթը Սոցիալական Ապահովության մօտ: Սակայն, ինքնաշխատ անձիք անձամբ պետք է ուղարկեն իրենց հասույթը եւ հարկերը Ներքին Հարկային Ծառայողության:

Դուք ինքնաշխատ եք եթե առանձին կամ գործակիցի հետ վարում եք մի արհեստ, առետուր կամ մասնագիտություն: Դուք արձանագրում եք ձեր հասույթը Սոցիալական Ապահովության մօտ ձեր տարեկան դաշնակցային հարկերու հայտարարության ներկայացմամբ (federal income tax): Եթե ձեր տարեկան զուտ հասույթը 400 դոլար է կամ ւելի, պետք է այս եկամուտը արձանագրեք SE ցուցակով (Schedule SE), որեւէ այլ պետք եղած թղթերի հետ:

ունեք 25,000 դոլար զուտ հասույթ, դուք կրկնակի Սոցիալական Ապահովության հարկ չեք վճարի 94,200 դոլարից անցնող հասույթին համար: Ձեր գործատերը ձեր 70,000 դոլար եկամուտի համար կպահի 7.65 տոկոս Սոցիալական Ապահովության եւ Մետիքերի հարկեր: Դուք վճարելու եք 15.3 տոկոս հարկ մնացյալ 24,200 դոլարի համար եւ 2.9 տոկոս Մետիքերի հարկ՝ մնացյալ 800 դոլար հասույթի համար:

Աշխատանքի վարկեր

Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու համար պետք է Սոցիալական Ապահովության հարկեր վճարած լինեք աշխատելով մի որոշ ժամանակ: Չեր ծննդյան քվից կախյալ է հարկավոր եղած աշխատանքային ժամանակաշրջանը, սակայն առաւելագոյնը 10 տարի պետք է աշխատած լինեք (40 վարկ):

2006 թվին, եթե ձեր զուտ հասույթը 3,880 դոլար կամ ւելի է, դուք շահում եք տարեկան առաւելագոյն չորս վարկեր՝ մէկ վարկ ամէն 970 դոլարի համար: Եթե ձեր զուտ հասույթը 3,880 դոլարից քիչ է, թերեւս կստանաք վարկ՝ օգտագործելով այս թերթիկում ւելի ուշ նկարագրված կամավոր կերպի միջոցով:

Չեր ընդհանուր աշխատանքային պատմությունն է որոշում ձեր ապագայում ստանալիք նպաստների գումարը: Ուրեմն, կարեւոր է որ ձեր լրի հասույթը արձանագրեք Սոցիալական Ապահովության մօտ, ինչպես օրէնքը պահանջում է:

Ձեր զուտ հասույթի կռահումը

Սոցիալական Ապահովության համար զուտ հասույթ նշանակում է ձեր ընդհանուր հասույթը՝ ձեր արհեստից կամ առետրից, նվազ ձեր օրինական առետրական հանումներ եւ արժեզգազրկումներ:

Որոշ եկամուտներ հաշվի չեն առնվում Սոցիալական Ապահովության կողմից եւ պետք չէ մաս կազմեն ձեր զուտ հասույթի հաշվին՝

- Բաժնետոմսային (stocks) շահաբաժին եւ պարտատոմսերի (bonds) շահ, բացի այն դէպքում, երբ դրանք ստանում եք որպես բաժնետոմսերի եւ արժեթղթերի գործակատարու.
- Փոխաւսվություններից (loans) շահ, բացի այն դէպքում, երբ ձեր գործը փոխաւսվություն կատարել է.
- Կալվածի վարձեր, բացի այն դէպքում, եթե կալվածի գործակատար եք կամ կանոնավորապես ծառայություն եք մատուցում առավելաբար վարձողի համար. կամ
- Սահմանափակ գործընկերությունից (limited partnership) ստացված եկամուտ:

Սոցիալական Ապահովության եւ Մետիքերի հարկերի վճարում

2006 թվի համար ինքնաշխատության Սոցիալական Ապահովության հարկի սակն է 15.3 տոկոս մինչեւ 94,200 դոլար եկամուտի համար: Եթե ձեր զուտ հասույթը 94,200 դոլարից ւելի է, դուք շարունակում եք մնացյալ եկամուտի համար վճարել միայն Մետիքերի հարկը, որը 2.9 տոկոս է:

Չեր հարկերը նվազեցնելու համար կան երկու եկամտահարկային հանումներ:

Առաջին, ձեր Սոցիալական Ապահովության հարկի կէտը հանում եք ձեր զուտ հասույթից: Սա նմանում է գործավորի պարաբայում, երբ նրան գործատիրոջ վճարած հարկի բաժինը աշխատավարձ չի համարվում գործավորի համար:

Երկրորդ, դուք կարող եք ձեր Սոցիալական Ապահովության հարկի կէտը հանել Ներքին Հարկային Ծառայողության Ձեւ 1040-ի վրա: Բայց այս նվազումը պետք է կատարվի ձեր ընդհանուր եկամուտից՝ որոշելու համար ձեր ճշգրիտ ընդհանուր եկամուտը: Այն չի կարող լինի առանձին նշված նվազում եւ պետք չէ նշվի ձեր C ցուցակի մեջ:

Եթե ունեք աշխատավարձ եւ ինքնաշխատության հասույթ, նախ վճարում եք ձեր աշխատավարձերի հարկը: Այս օրէնքը կարեւոր է միայն եթե ձեր ընդհանուր հասույթը 94,200 դոլարից բարձր է: Օրինակ, եթե 2005 թվին ունեցել եք 20,000 դոլար աշխատավարձ եւ 30,000 դոլար ինքնաշխատության եկամուտ, դուք համապատասխան Սոցիալական Ապահովության հարկեր վճարելու եք երկու եկամուտների վրա: Բայց եթե 2006 թվին ձեր աշխատավարձը 70,000 դոլար է եւ առետրից

Կամավոր կերպ

Եթե ձեր իսկական զուտ հասույթը 400 դոլարից քիչ է, ձեր հասույթը հաշվի կառնվի Սոցիալական Ապահովության համար կամավոր կերպով տեղեկագրման միջոցով: Կամավոր կերպով տեղեկագրման միջոցը կարող էք օգտագործել՝ եթե ձեր ընդհանուր հասույթը 600 դոլար կամ ավելի է, կամ ձեր շահը 1,600 դոլարից քիչ է:

Դուք կամավոր կերպով տեղեկագրման միջոցը կարող եք օգտագործել միայն հինգ անգամ ձեր կյանքում: Ձեր իսկական զուտ եկամուտը պետք է լինի 400 դոլար վերջին երեք տարիների ընթացքում առավելագույնը երկու տարվա համար եւ ձեր զուտ հասույթը պետք է լինի ձեր ընդհանուր եկամուտի երկու երրորդը:

Ահա թե՛ ինչպես կգործի այն՝

- Եթե ձեր ընդհանուր եկամուտը ինքնաշխատությունից 600 դոլարի եւ 2,400 դոլարի միջև է, դուք կարող եք տեղեկագրել ձեր ընդհանուր եկամուտի երկու երրորդը կամ իսկական զուտ հասույթը, կամ
- Եթե ձեր ընդհանուր եկամուտը 2,400 դոլար է (կամ ավելի), իսկ իսկական զուտ շահը 1,600 դոլար է (կամ նվազ), դուք կարող եք արձանագրել 1,600 դոլար կամ ձեր իսկական զուտ հասույթը:

Հատուկ տեղեկություն հողագործներին՝ Եթե հողագործ եք, կարող եք կամավոր կերպով տեղեկագրման միջոցը օգտագործել ամեն տարի: Անհրաժեշտ չէ, որ ունեցած լինեք նվազագույնը 400 դոլար զուտ հասույթ անցած տարում: Թե՛լադրում ենք որ կարդաք հետևյալ հրատարակությունը *A Guide For Farmers, Growers And Crew Leaders* (հրատարակութա համար 05-10025) (*Ուղեցույց Հողագործներու, Աճեցնողներու եւ Գործավորների Առաջնորդներու*): Այս հրատարակությունը Հայերեն լեզվով չկա:

Ինչպե՞ս արձանագրել հասույթը

Դուք պարտավոր եք հետևյալ դաշնակցային հարկի թղթերը լրացնել ամեն տարվա մինչև Ապրիլի 15-ը եթե ունեցել եք 400 դոլար կամ ավելի զուտ հասույթ:

- Form 1040—*US Individual Income Tax Return* (Չեւ 1040—*Ամերիկայի Միացյալ Նահանգներու Անհատի Եկամուտի Հարկերի Հայտարարություն*).
- Schedule C—*Profit or Loss from Business* (Ցուցակ C—*Շահ կամ Վնաս Առևտուրից*) կամ
- Schedule F—*Profit or Loss from Farming* (Ցուցակ F—*Շահ կամ Վնաս Հողագործությունից*) որն որ պատշաճ է, եւ
- Schedule SE—*Self Employment Tax* (Ցուցակ SE—*Ինքնաշխատության Հարկ*)

Դուք այս թուղթերը կարող եք ստանալ Ներքին Հարկային Ծառայությունից, դրամատան եւ նամակատան կեդրոններից: Հարկային հայտարարությունները եւ ցուցակները Ներքին Հարկային Ծառայության ուղարկեցեք ձեր ինքնաշխատության հարկի հետ:

Եթե նոյնիսկ պարտական չեք եկամուտի հարկեր վճարելու, պետք է լրացնեք 1040 Չեւ եւ SE Ցուցակը՝ վճարելու համար ինքնաշխատության Սոցիալական Ապահովության հարկ, նոյնիսկ եթե արդեն իսկ ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ:

Ընտանեկան ձեռնարկության համաձայնություն

Ընտանիքի անդամներ կարող են ձեռնարկություն վարել միասին: Օրինակ, ամուսին ու կին կարող են գործակիծ լինել, կամ միասնաբար վարել ձեռնարկություն մը: Եթե որպես գործակից միասին առևտուր եք վարում, ձեզմից իրաքանչիւրը պարտավոր է իր բաժնի առևտրական հասույթը, որպես զուտ հասույթ, արձանագրել անջատ ինքնաշխատության հայտարարության (SE Ցուցակ) մէջ, նոյնիսկ եթե ներկայացնեք միացյալ եկամուտի հարկերի հայտարարություն: Գործակիցները որոշում են ամեն մեկի զուտ հասույթի բաժանումը (օրինակ՝ 50-ական տոկոս):

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, www.socialsecurity.gov ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետևյալ անվճար թվին 1-800-772-1213 (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետևյալ հատուկ TTY թվին 1-800-325-0778): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնաշաղկապ հարցումները առաօտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչև Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Չանգահարեցեք մեզ հետևյալ թվին 1-800-772-1213 եւ ճնշեք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզ: Եթե չ'կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թե՛ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:



Social Security Administration
SSA Publication No. 05-10022-AM
If You Are Self-Employed (Armenian)
January 2006